

«ՇԱՀՆԱՄԵ»-Ի ՄԻԱԿՈՒՇ ՄԱՍԻՅԱՅԻ ԿԵՐՊԱՐԻ
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՄԱ-ՀՈՒՆԱԿԱՆ
ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԵՏ

Սիավուշը «Շահնամե»-ի ամենասիրված հերոսներից է: Նա իր բարի խառնվածքի և բնույթի արդյունքում դարձավ բարու և չարի պայքարի զոհ: Կարծես, բարության ծառը չորանալուց փրկելու համար, այն երբեմն պետք է ոռոգվի մարդկության լավագույն և անմեղ զավակներից մեկի արյունով: Սիավուշի վրեժխնդրությունից զոհվեցին նաև հազարավոր անմեղ և մեղավոր մարդիկ: Կարևորն այն է, որ ցանկացած գնով, արժանին պետք է հատուցվի, և մեղավորը պետք է կրի իր պատիժը: Հակառակ դեպքում, «Շահնամե»-ի տեսանկյունից չար ոգին աշխարհը կպարուրի մթության և դաժանության շղարշով: Իրանի և Թուրանի պատերազմը հիշեցնում է Հոմերոսի «Իլիական»-ում հիշատակված հունա-տրոյական պատերազմները: «Շահնամե»-ի պայքարն առավել մարդկային և խորքային իմաստ ունի: Սիավուշը պատկանում է այն հերոսների դասին, որոնք ծնվել են յուրահատուկ խառնվածքով և առաքելությամբ: Նա լույս աշխարհ է եկել հատուկ պայմաններում: «Շահնամե»-ի և հին իրանական ավանդության համաձայն չարն ու բարին մույն ծառի երկու տարբեր ճյուղեր են, որոնցից մեկը բարու պտուղներ էր տալիս, իսկ մյուսը՝ չարիքի:

Սիավուշը թուրքական ծագում ունենալով հանդերձ, բարության կողմնակից էր: Նա արտաքին գեղեցկության, վայելչագեղության և բախտագուշակների կողմից կանխատեսած զարմանահիրաշ ճակատագրի բոլոր տեսանկյուններից բացառիկ մանկություն էր ունեցել:

*Հեռացավ մանկությունը նրանից ինչպես փերի
Եվ դեմքին իջավ լրջությունն ագերի կուռքերի
Տիրակալը նրան Սիավուշ անվանեց
Եվ ամբողջ երկիրը նրան նվիրեց*

Սիավուշ անունը բաղկացած է երկու արմատից՝ «սիա», որը թարգմանաբար նշանակում է սև, և «արշան», որն արտահայտում է «արու կենդանի» իմաստը: Հին իրանական ավանդության համաձայն նրա անունը մեկնաբանվել է հետևյալ կերպ. «սև ծիավոր»¹:

Զրադաշտական աղբյուրների համաձայն Սիավուշը զառվանի (զրադաշտականության ուղղություններից մեկի) հետևորդ էր:

¹ Եթեա, եբրահիմ Փուր Դավուդ, հ 2, էէ 226-234:

Ճակատագիրն ու իրադարձությունները պատվում են ժամանակի շարժմանը հակառակ և մարդկային ջանքերի ապարդյունությունը խիստ անհանգստացնում էր նրան: Ձառվանի ուսմունքն արգելում է պատերազմը, վրեժխնդրությունը, խոստման դրժումը, անիրավությունն ու անօրինականությունը: Սիավուշն անիրավ մարդ չէր և խոստումների իրագործման հարցում չէր վարանում: Նրա մարմինը կրակի և անգին քարի նման մաքուր էր և այդ մաքրությունն ապացուցելու համար նա Աբրահամ մարգարեի նման անցավ կրակի միջով: Սիավուշի մարմինը Ջրադաշտի մարմնի նման մաքրամաքուր էր: Սիավուշի և կրակի միջով անցնելու նրա առասպելը, գառվանի և սեմական ավանդապատումներին նման լինելուց բացի, ներշնչված է հնդկական «Ռամի» առասպելով: Նրա պատմության նմանությունը «Բալդար²»-ի և Ռավինթանիի հետ, ինչպես նաև Սիավուշի և Բալդարի կերպարների համեմատությունը նույնպես հետաքրքիր թեմա է:

Սիավուշի անմեղ և դաժան սպանության պատմությունը նման է նաև Հիսուս Քրիստոսի պատմությանը, քանզի նրանց երկուսի հոգիներն էլ դեպի երկինք համբարձվեցին: Սիավուշի պատմությունը ինչ որ կերպ նման էր նաև Յուսեֆի պատմությանը, քանի որ նրանք երկուսն էլ պայքարում էին կանանց կողմից իրենց ներկայացված անտեղի մեղադրանքների հերքման և իրենց մաքրության և արդարության ապացուցման համար (Սուդաբե, Ջուլեյխա): Իհարկե, ինչպես տեսանք, Սիավուշը վայելքներից հետո դաժան ճակատագրի և թշվառության արժանացավ, իսկ Յուսեֆը տարիներ շարունակ կրած զրկանքներից և թշվառությունից հետո արժանացավ հավիտենական արքայության: Նրանց մեղադրող կանայք նույնպես հակառակ ճակատագրերի արժանացան, քանզի Ջուլեյխան Յուսեֆի հանդեպ ունեցած ուժգին սիրո արդյունքում վերածվեց մաքրության աստվածուհու, իսկ Սուդաբեն իր գործած մեղքի պատճառով Քեյքավուսի կողմից պատժվեց:

Հունական գրականության մեջ նույնպես գոյություն ունեն Սիավուշի և Սուդաբեի տարօրինակ սիրո պատմությանը նման պատմություններ, որոնցից է, օրինակ, Հիպոլիտի³ հանդեպ թեզեի⁴ կնոջ Ֆեդրի⁵ սերը: Երկու պատմություններում էլ ծեր և դաժան թագավորների թեթևամտության պատճառով սպանվում են երկու երիտասարդ արքայազներ և երկու դեպքում էլ կարևոր դեր է խաղում մարդկային ճակատագրի դաժան խաղը: Ավետալյուն Սիավուշը սև հերոս է,

² Բահար, Սեհրդադ, Որոմուններ իրանական մշակույթում, է 80-85:

³ Hyppolite

⁴ Thesee

⁵ Phedre

որն օժտված է առասպելական և էպիկական երկու կերպարներով: Առասպելական Սիավուշն աստվածներից մեկն էր և հանդիսանում էր մաքրության և սրբության խորհրդանիշ: Նա արդարության, նահատակության և ճշմարիտ մահվան աստվածն էր: Նրան համարում էին նաև բուսականության աստված, քանի որ այնտեղ, որտեղ թափվել էր Սիավուշի արյունը՝ խոտ էր բուսել: Նրան համարում են Սիջազետից հնագույն և ավանդական ուսմունքի ժառանգորդ, որը կապվում է նաև «Թեմուզ» աստծո անվան հետ: Վերջինս, որ շատ նման էր Սիավուշին, նահատակվեց ձմռանը, իսկ գարնանը՝ վերակենդանացավ և իր հետ վերակենդանացրեց նաև բուսականությունը⁶:

Սիավուշն ու հունական Հիպոլիտը

Սիավուշի մայրը Գերսիուզի թոռն էր, որն ամուսանացավ Քավուսի հետ և այս խառը իրանա-թուրանական ամուսնությունից ծնվեց Սիավուշ անունով մի մանուկ, որն արտասովոր և բացառիկ երեխա էր:

Աշխարհը լցվեց մանուկի մասին խոսք ու զրույցով
Քանի որ մինչ այդ նման դեմք ու ծամ չէր տեսել աշխարհը

Մանկությունից հետո Սիավուշի կյանքի կարևորագույն փուլը Ռոստամի մոտ ուսումնառության շրջանն էր: Ռոստամը Քեյքավուսին խնդրեց իրեն հանձնել Սիավուշի դաստիարակությունն ու խնամակալությունը, և Քեյքավուսը համաձայնվեց: Սա ոչ միայն Սիավուշին հնարավորություն տվեց մարտարվեստի հմտություններ սովորել ժամանակի մեծագույն դյուցազնից, այլև՝ նպաստեց հետագայում Ռոստամի մեջ Սիավուշի վրեժի մեծացմանը: Ռոստամը նրան սովորեցրեց մարտի և պատերազմի բոլոր հմտությունները:

Յոթ տարի թագավորելուց հետո Մանշուր արքան Քուհեստանի թագավորությունը հանձնեց Քեյքավուսին և հենց այդ ժամանակ էլ Սիավուշի մայրը մահացավ: Քեյքավուսի երկրորդ կինը՝ Սուդաբեն, որ Համավորան արքայի դուստրն էր, Սիավուշի կյանքում մի նոր էջ բացեց: Այստեղ միմյանց են բախվում մեղավոր և անմեղ երկու կերպարներ և հենց այստեղ էլ մեկ անգամ ևս մարդկությունը բացահայտում է իր երկու լուսավոր և խավար, բոլորովին տարբեր բնույթները, որոնց մասին նշեցինք մախաբանում: Սուդաբեն որոշել էր խաբել և գայթակղել Սիավուշին: Սիավուշն ամեն ինչ պատմեց թագավորին, որն առաջարկեց միասին գնալ սենյակ: Սիավուշը խիստ նրբանկատ էր և պատկերացնում էր, որ հայրը ցանկանում է նրան փորձել: Սուդաբեն խորամանկաբար և ստորաբար ասում է, որ Սիավուշին է տալու իր աղջկան, և ամեն ինչ անում էր արքայազնին խաբելու և գայթակղելու համար: Իր հարստությունն

⁶ Եսմայիլփուր, Աբուլղասեմ, Առասպելի արտացոլումը Շահնամում, էէ 165-190:

ու գանձերը ցույց տալով նա որերորդ անգամ ցանկանում էր գրավել Սիավուշի սիրտը:

Սիավուշը դարձյալ չհանձնվեց և Սուդաբեն սկսեց նենգ քայլերի դիմել: Սա շատ նման է Յուսեֆի և Զուլեյխայի պատմությանը, որտեղ Զուլեյխան այնպես էր սիրահարվել Յուսեֆին, որ ցանկանում էր ամեն խաբկանքի և կեղծիքի գնով նրա սիրտը գրավել: Սակայն, Յուսեֆը պատվով դուրս եկավ աստվածային փորձությունից և չհայտնվեց Զուլեյխայի ճիրաններում⁷: Սիավուշը նույնպես կարողացավ փախչել այդ կախարդ կնոջ ձեռքից: Թագավորն այս պատմությունը լսելով երկուսին էլ իր մոտ կանչեց: Սուդաբեն լացակումած եկավ թագավորի մոտ և, որպեսզի Սիավուշին սպանել տա՝ ասաց, որ վերջինս ուզում էր իրեն բռնաբարել:

*Ինձ պատահարար ծուղակի մեջ գցեց
Առավ իր քարի պես ամուր բազուկների մեջ
Ես չենթարկվեցի և նա պոկեց ամբողջ վարսերս
Իսկ երեսս դարձավ ճանկոտաված և քերծված*

Քավուսը ճշմարտությունն իմանալու համար Սուդաբեին մեղավոր համարեց և հրամայեց, որ նրան սպանեն: Սակայն, վախեցավ, որ Դամավորանն իր դեմ պատերազմ կսկսի, և մտածելով այն մասին, որ ինքը սիրում է Սուդաբեին և որ նա է խնամել իրեն և իր երեխաների մայրն է, չսպանեց նրան: Ճշմարտությունն իմանալու միտքը թագավորին հանգիստ չէր տալիս և Քավուսը գնաց մոզերի մոտ և հարցրեց, արդյո՞ք ճշիտ է Սուդաբեի այն խոսքը, որ Սիավուշը ցանկացել է բռնաբարել նրան և նա կորցրել է իր երեխային: Մոզերն ասացին, որ Սիավուշը պետք է անցնի կրակի միջով և միայն այսպես կպարզվի նրա անմեղ կամ մեղավոր լինելը:

Այս պատմությունը նման է Ղուրանում ներկայացված սուրբ Աբրահամի պատմությանը, որը ժամանակի թագավոր Շահնուդի հանդեպ իր մաքրությունն ապացուցելու համար պետք է անցներ կրակների միջով: Աբրահամն Աստծո օգնությամբ անցավ մինչև երկինք բարձրացող և բոցկտացող կրակի միջով և կրակը վերածվեց ծաղկաստանի: Նա ողջ և առողջ կրակի միջից դուրս եկավ և բոլորին ապացուցեց, որ Աստծո միակը լինելու իր հայտարարությունն ու կարծիքը ճշմարիտ է և որ բոլորը պետք է ընդունեն Աբրահամի կրոնը: Սիավուշը նույնպես ողջ և առողջ դուրս եկավ ահեղի կրակի միջից՝ ապացուցելով իր անմեղությունը: Նա թագավորին խնդրեց, որպեսզի Սուդաբեին նույնպես ներեն:

*Սուդաբեի այս մեղքն իմ խնդրանքով ներիր
Գուցե ընդունի իր սխալն ու ճիշտ ուղի ընտրի*

⁷ Ղուրան, սուրա «Յուսեֆ»:

Սիավուշի կյանքի երրորդ փուլը սկսվում է խաբթւորանում: Սիավուշն արքունիքի թունավոր մթնոլորտից և Սուղաբեի սադրանքներից փախչելու, ինչպես նաև Իրան-Թուրան պատերազմի ժամանակ Իրաքի սպանութայն համար վրեժխնդիր լինելու նպատակով հայտարարում է, որ պետք է հարձակվի Աֆրասիաբի երկրի վրա: Նախքան պատերազմի սկսվելը Աֆրասիաբը դաժան երազ է տեսնում, որտեղ վրեժխնդրությունից դրդված պատերազմում է Սիավուշի դեմ: Պատերազմ չի սկսվում, սակայն, իրանցիները ստիպում են, որ, այնուամենայնիվ, պատերազմ լինի: Աֆրասիաբը Գերսիուզի միջոցով Իրանի արքաներին նվերներ է ուղարկում, սակայն, Քեյքավուսը պնդում է, որ պետք է պատերազմի: Սիավուշը նույնպես երկմտանքի առաջ է կանգնում և որոշում է հեռանալ երկրից և ապրել բուրդից հեռու: Սակայն, դրա համար նա պետք է անցներ Թուրանով: Աֆրասիաբի խորհրդական ծերունիներն առիթից օգտվեցին և խորամանկաբար, երբ Սիավուշը մտավ Թուրան, Աֆրասիաբի աղջկան՝ Ֆարանգիսին, կնության տվեցին Սիավուշին, որպեսզի նրան Թուրանում պահեն: Ապա պայմանավորվեցին, որ Սիավուշը պետք է պահպանի Թուրանը: Սակայն, Գերսիուզը Սիավուշի զենքն ու զրաիը տեսնելով նախանձում է վերջինիս և սկսում է դավեր նոթել նրա դեմ: Գերսիուզին հաջողվում է փոխել արքայի վերաբերմունքը Սիավուշի հանդեպ: Արքայի խորհրդական ծերունիները տարբեր մրցություններ են անցկացնում: Զոգան և նետ ու աղեղ մրցույթներում Սիավուշը փայլուն հաղթանակ է տանում: Գերսիուզը գալիս է Աֆրասիաբի մոտ և ասում, որ զորքն անցնում է Սիավուշի կողմն ու նա կարող է հարձակվել Թուրանի վրա և ավերել այն: Աֆրասիաբը զայրանում է և որոշում է պատերազմել Սիավուշի դեմ: Սիավուշը նույնպես սարսափելի երազ է տեսնում և պատմում Ֆարանգիսին:

Այստեղ նա կանխատեսում է քենախնդրությունն ու Քեյխոսրովի կողմից սպանվելը: Նա պարտվեց կյանքի ու ճակատագրի առջև: Այս մարտում Սիավուշը գերեվարվեց՝ կորցնելով իր հազարավոր զինվորներին: Գերսիուզը Աֆրասիաբին դրդեց սպանել Սիավուշին: Ֆարանգիսի լաց ու կոծը ոչ մի ազդեցություն չունեցան: Սիավուշը սպանվեց հետևյալ կերպ.

*Եկավ դյուցազուն Սիավուշը
Որպես ասպետ և ամեն ինչ ցնցեց
Իսկ երբ քաղաքն ու զինվորները կորցրեց
Նրան ծեռքերը կապած տարան դաշտ
Տարան բոկոտն և մագերից քարշ տալով
Մինչև որ հասավ նշանակետին
Մի աման բերեցին ոսկեպատ
Եվ ոչխարի մամն մորթեցին*



*Անջատեցին գլուխը մարմնից
Իսկ արյունը լցվեց ամանի մեջ
Չենց նույն տեղում ծաղիկներ բուսնեցին
Եվ հենց նույն պահին ամանը շուռ եկավ*

Սիսվուշի և Սուդաբեի պատմությունը շատ նման է հունական առասպելին, քանի որ այստեղ էլ Թեզեի կին Ֆեդրը էր գլխակորույս սիրահարված թագաժառանգ Չիպուլիտին։ Այս երկու պատմություններն էլ անպատասխան սիրո դաժան պատմություններ են, որոնցում ծեր և թեթևամիտ արքաների գործողությունների արդյունքում երկու երիտասարդ արքայազներն էլ սպանվեցին։ Երկու պատմություններն էլ ներկայացնում են մարդկային ճակատագրի դաժան խաղը։

Ըստ առասպելի Թեզեն Աթենքի թագավորի տասներորդ դուստրուհին էր։ Նրա մանկության պատմությունը հիշեցնում է Սոհրաբի մանկությունը։ Երբ նրա հայրը՝ Էժեն ցանկանում էր լքել իր կնոջ երկիր Թրեզենը և հեռանալ դեպի Աթենք, կոչիկներն ու սուրը տվեց իր կնոջը՝ Եթրային և խնդրեց, որպեսզի որդու չափահաս դառնալուց հետո զենքն ու զրահը նրան տա և ուղարկի Աթենք։ 16 տարին լրանալուն պես որդին վերցրեց իր հոր զենքն ու զրահը և գնաց Աթենք։ Աթենքում Մեդեա անուով մի կախարդ կին ցանկացավ վերացնել նրան, սակայն, Էժեն իր սրով ճանաչեց որդուն և փրկեց նրան՝ ազատելով կախարդի ճիրաններից։ Այա մա գնաց պատերազմելու ամազոն ցեղի⁸ ներկայացուցիչների հետ, գերեվարեց նրանց թագուհուն և ամուսնացավ նրա հետ։ Այդ ամուսնությունից ծնվեց նրա Չիպուլիտ որդին։ Ֆեդրը սիրահարվել էր իր ամուսնու որդու վրա և ոչինչ անել չէր կարող։ Իսկ Չիպուլիտը Պիտտերի պալատում զբաղված էր ուսումնառությամբ։ Հունական առասպելներում հաճախ է հիշատակվում Չիպուլիտի հանդեպ Ֆեդրի սիրո պատմությունը։ Ֆեդրը Չիպուլիտի սառնասրտության պատճառով զայրացավ և իր դայակի օգնությամբ Չիպուլիտին մեղադրեց իր հանդեպ բռնաբարության փորձ կատարելու մեջ։ Չիպուլիտը սկսեց պաշտպանվել, սակայն, Թեզեի մոտ անկարող էր և թագավորը նրան մահապատժի ենթարկեց։

Երբ ծիու վրա նստած Չիպուլիտին ծովի կողքով տանում էին մահապատժի հրապարակ նրա վրա հարձակվեց ծովահորեշը և ծիուց վայր գցեց։ Այդ ընթացքում ծին վազում էր, իսկ Չիպուլիտը կախված էր նրա պոչից՝ ինչի արդյունքում մարմինը մասնատվեց։ Թագավորը նույնպես սգաց նրա մահն ու այդ մասին տեղեկացրեց Ֆեդրին։ Ֆեդրը Չիպուլիտին սիրելով և իր մեղավոր-

⁸ Վայրի և պատերազմող կանանց ցեղախումբ, որը դիցաբանության համաձայն, վերացնում են ցեղի նորածին տղաներին և մեծացնում էր միայն աղջիկներին։

րությունը զգալով եկավ թագավորի մոտ, պատմեց իրականությունը և հենց այդ պահին ամուսնու ձեռքերի մեջ հոգին ավետեց:

Իրանական և հունական առասպելները խիստ նման են միմյանց: Թեզեի և Քավուսի կերպարներն անհամեմատելի են: Նրանց միակ ընդհանրություն այն է, որ նրանք երկուսն էլ թեթևամիտ, դաժան և իրենց կանանց կույր սիրով սիրող թագավորներ են: «Շահնամե»-ում մենք տեսնում ենք Քավուսին, որն անկարող էր Սուղաբեի առջև: Եվրիպիդեսի և Ռասինի ստեղծագործության մեջ տեսնում ենք Թեզեյին, և ինչպես համզվեցինք, նրանք երկուսն էլ պարտված էին իրենց կանանց: Սակայն, Սիավուշն ու Յիպուլիտն այս առումներով տարբերվում էին իրենց հայրերից: Յիպուլիտը պարկեշտ և մաքուր էր: Սիավուշն, իր հերթին, առաքինի էր և ինքնասիրությունից դրդված չտրվեց Սուղաբեի խաբկանքներից: Նմանատիպ մի պատմություն էր նաև Ֆեդրի և Յիպուլիտի սիրո պատմությունը՝ Ռասինի ողբերգությունում: Յիպուլիտի հետ ունեցած երկխոսության ընթացքում Ֆեդրը սկզբում խոսում է Յիպուլիտի ասպետականության, նրա և հոր մարտերի մասին, և միայն վերջում է ակնարկում նրա հանդեպ ունեցած իր սիրո մասին: Սա բարկացնում է Յիպուլիտին, որն էլ որոշում է հեռանալ երկրից: Ֆեդրը խնդրում է, որպեսզի Յիպուլիտն իր սրով սպանի իր նման անառակ կնոջը, և Յիպուլիտը համաձայնվում է: Սակայն, երբ Յիպուլիտը բարձրածայն գոռում է մի քանի սպասավոր ներս են գալիս և թույլ չեն տալիս: Ներկայացրեցինք նաև Սիավուշի հանդեպ Սուղաբեի զրպարտությունն ու Քավուսի բարկությունը: Ռասինի ողբերգությունում այդ պատմությունը բոլորովին այլ է: Ֆեդրը վախենում էր, որ Թեզեի մահվան կեղծ լուրերի տարածումից և նրա կենդանի մնալուց հետո որդին հորը կպատմի, որ կինն իրեն սիրո խոստովանություն է արել: Նա իր դայակի օգնությամբ և խորհրդով գնում է ամուսնու մոտ և Յիպուլիտին մեղադրում թագավորի հանդեպ դավաճանության և բռնաբարության մեջ: Թեզեն հավատում է կնոջ խոսքերին: Յիպուլիտն իր անմեղությունն ապացուցելու համար պատմում է իր և էրսի սիրո մասին: Սուղաբեն և Ֆեդրը երկուսն էլ արքայադուստրեր էին, որոնք իրենց ամուսինների երկրների հանդեպ թշնամանք էին տածում: Սուղաբեին գերության վերցրեց և իր հետ Յամավորանից բերեց Քավուսը, իսկ Ֆեդրին կրետական պատերազմների ժամանակ գերեվարեց և կնության առավ Թեզեն: Նրանք երկուսն էլ գեղեցիկ են, երիտասարդ և սիրահարվում են իրենց ամուսինների ավագ որդիներին: Ֆեդրը գունատ և ցիհար էր, իսկ Սուղաբեն կենսուրախ և հաղթանդամ: Ֆեդրը առաքինի կին էր և սիրում էր իր ամուսնուն՝ ամենուրեք պատմելով նրա հերոսությունների մասին:

Ճակատագիրը նրան դարձրեց ցանկասեր աստվածների գերին: Նա դժբախտ կին էր: Իսկ Սուղաբեն Սիավուշին սիրում էր միայն ցանկասիրու-

թյունից դրդված և ծգտուն էր իր մարմնական պահանջները բավարարել: Սուղաբեն Սիավուշին մեղադրեց շատ անխիղճ և անամոթ կերպով: Նա պատռեց իր հագուստներն ու մագերն արծակելով սկսեց աղաղակել: Այս պատմությունը խիստ նման է Ջոլեյխայի և Յուսեֆի պատմությանը: Սուղաբեի կողմից Սիավուշի, Ֆեդրի կողմից Յիպոլիտի և Ջոլեյխայի կողմից Յուսեֆի հանդեպ նեկայացված զրպարտության պատմությունները զարմանալի կերպով մերժեցնում են իրանական, հունական և սեմական առասպելները: Բազմաթիվ են նաև Յիպոլիտի և Սիավուշի նմանություններն ու տարբերությունները: Յիպոլիտը Սիավուշից ավելի փորձված, անկեղծ և անմիջական էր: Սիավուշը Սուղաբեի հետ վարվելիս ավելի անփորձ էր քան Յիպոլիտը և շուտ ազդեցության տակ հայտնվեց:

Նա ավելի զգույշ էր և վախեցնում էր Սուղաբեից: Իսկ Յիպոլիտը բյուրեղապակու նման պարզ և լուսավոր էր: Սիավուշն ավելի ծածուկ և խորամանկ էր: Յիպոլիտը, որի երակներում հոսում էր ամազոնների արյունը, այնքան էլ կապված չէր ավանդույթներին և սովորույթներին: Ռասիմի ողբերգության մեջ գլխավոր հերոսը ոչ թե Յիպոլիտն է, այլ՝ Ֆեդրը: Իսկ Շահնամեում գլխավոր հերոսը Սիավուշն է: Ռասիմի ողբերգության մեջ զոհը Ֆեդրն է, իսկ Ֆիրդուսուստեղծագործության մեջ՝ Սիավուշը:

Այս պատմության մեջ Ֆիրդուսու, Եվրիպիդեսի և Ռասիմի հայացքները, որպես իրանցի և հույն բանաստեղծներ, խիստ մոտ է միմյանց: Նրանք այդ պատմությունները կերտել են որպես ողբերգական և ցավալի պատմություններ, որոնք կարելի է բեմադրել: Երկուսն էլ դաժան սիրո ողբերգական պատմություններ են, որոնք խորը ազդեցություն են թողնում հանդիսատեսի վրա: Երկուսն էլ կարևորում են մարդկային պատմության ընթացքում անխուսափելի կեղծիքն ու զրպարտությունը: Սիավուշի սպանության վայրում աճած բույսերն ու Յիպոլիտի տղամարդկային ճիչը արդարության, ճշմարտության, ազատականության, ասպետականության և մաքրության խորհրդանիշ են:

Գրականության ցանկ

1. Էսլամի Նառոջան, Մոհամմադ, «Յերոսների կյանքն ու վախճանը Շահնամեում», «Յազդան» հրատ., 1984:
2. Այաթի, Աբդելհամիդ, Ղուրանի մեկնությունները, «Սորուշ» հրատ., 1988:
3. Բրաուն, Էդվարդ, Պարսկական գրականության պատմություն, Չամալսարանի հրատ.:
4. Սեթարի, Ջալալ, Առասպել և առեղծված, «Ղաղնուս» հրատ., 2001:
5. Սարաֆրազի, Յադի, «Օտարամերժությունը Շահնամեում», մագիստրոսական ավարտաճառ, 2006:
6. Ջադիդեյու, Աբդոլիստեյն, «Չալեի քարավանի հետ», «Ղաղնուս» հրատ., 1989:
7. Ռոժե, Բաստիր, Առասպելագիտություն, Ջալալ Մաթթարիի թարգմ., Թեհրան, 1996:

8. Համիդիան, Սաիդ, Ֆիրդուսու մտքի և գաղափարների ըննարկում, «Կենտրոն» հրատ., Թեհրան, 2004:
9. Սաֆա, Ջափուլա, Էպոսագրությունն Իրանում, «Ֆիրդուսի» հրատ, Թեհրան, 1999:
10. Ֆիրդուսի, Աբուլղասեմ, «Շահնամե», Թեհրան, 2001:
11. Քյազազի, Ջալալէդին, Սիավուշի պատմության պատմական նամակը, «Կենտրոն» հրատ, 2006:
12. Մոյին, Մոհամմադ, Իրանի Ֆարսի բառարան, «Ամիրքյաթիր» հրատ, Թեհրան, 1981:
13. Մասրուք, Շահռուխ, «Սիավուշի սուգը», «Խառնազմի» հրատ, 2006:
14. Հալ, Ջեյմս, Արևելյան և արևմտյան խորհրդանշների և պատկերների բառարան, թարգ. Ռադիե Բեհզադի, «Ֆարհանգսահամ» հրատ., 2006:
15. Հաքս, Ջեյմս, Մուրբ գրքի մեկնություն, Թեհուրի, 1970:
16. Հենրի Հուլ, Սամուել, Իրանի առասպելները, թարգ. Ֆարանգիս Սազղադիուր և Ալի Ասղարբեհրուդի, Թեհրան, 1999:
17. Յահադի, Մոհամմադ Ջահար, Պարսից գրականության մեջ պատմվածագրության և առասպելների բառարան, հրատ. «Սորուշ», 1990:
18. Յոհնան, Ջան Դեյ, Պարսից պոեզիայի տարածումն Անգլիայում և Ամերիկայում, թարգ. դոկտ. Սինադ Թամինդարի, հրատ. «Ռուզմե», Թեհրան, 2006:

Abstract

Expanding the of comparative sciences, in particular, mythology and comparative literature especially in recent decades, has demonstrated the capabilities of the Shahnameh in the literary world to emulate and sideswipe the boundaries and many of the masterpieces of dramatic, English, and rhapsody literature of the world are compared with different parts of the Shahnameh. Translations and research carried out by German researchers and translators on the story of Rostam and Sohrab, including Hageman, Feranlborg etc. and French ones, namely Rueckert and William Jones, Matthew Arnold and James Russell Lowell by the East India Company and the institutions of human sciences and comparative studies done in America and people like Alexander Rouges has played their cultural role in terms of strengthening the West literature through the Persian literature.